Ltn
1350

1871

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ

ԳՐԵԱԼ

Ի ԹԱԳԻՒՍ ՄՈՒՀՐԴԱՑԵԱՆՆԻ

ԴՈՐԹ ԼԳՐԴ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՖԱՖԵԱՆ

— 1881 —

1999

Լ. Ջ.

Հ՚ԱՎԱԳԱՐԱՆ

ԼԵՌ
1350

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ

ԳՐԵԱԼ

Ի ԹԱԴԷՈՍ ՄԻՀՐԴԱՏԵԱՆԷ

ԳՈՐԾ ԼԳՐ ՀԵՂԻՆԱԿԻՆ

ԼԷՕ
ԳՐԱԳԱՐԱՆ
679
28318-62

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ԳԱՖԱՖԵԱՆ
— 1871 —

43701-Կ.Հ.

ՀՖ 1353

1350-ԼՕ Գ

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆ

Ի ՎԵՐԱՑ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ

ԵՒ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈՎՈՒՈՒԹԵԱՆ

ԱԶԴ

Հետեւեալ համառօտ Դիտողութիւնը, որ ամուսնացեալ կղերականութեան վրայօք գրուած է, Ի խնդրոյ Մեծապատիւ Մարկոսեան Գրիգոր Եպիսկոպոսին գրեցինք, 1866 օգոստոս 19 թուականին, որ ատեն ինքը Ազգային առժամանակեայ խառն ժողովոյն Ատենապետն էր. բայց յետոյ խնդիրը իմացուելով՝ շատ մը հետաքրքիր և օրինաւորութիւն սիրող Անձինք մեր նուաստութենէն խնդրեցին՝ որ սոյն տեղեկութիւնը հրատարակեմք հասարակութեան. վասնորոյ մենք ալ նոյնը փոքր ինչ ընդարձակելով, ահաւասիկ կը հրատարակեմք առ Ի տեղեկութիւն բանասիրաց և ճշմարտասիրաց։

Առ Մեծապատիւ Գրիգոր Եպիսկոպոսի Մարկոսեան քաղաքթուն Ատենապետ առժամանակեայ Ազգային Խառն ժողովոյն Կ. Պոլսոյ։

1866 օգոստոս 19 'ի Պոլիս։

Աղնիւ բարեկամ,

Մեր նուաստութենէն անցեալ օր խնդրեցիք թէ, արդեօք կրնայ ամուսնացեալ մէկ անձ մը՝ իւր կենդանութեանը կինը թողելով Կղեր կամ վանական դառնալ, և թէ այս խնդրոյն վրայօք ինչ ապացուցական վկայութիւն կայ արդեօք մեր եկեղեցական պատմութեան մէջ, եւայլն։ Եւ ահա Ձեր խնդիրը կատարելով մեր գիտցածներէն մէկ քանին առնելով յիշատակարաններէն և եկեղեցական պատմութիւններէն համառօտակի կը նշանակեմք ասա. որք են,

Առաջին. —Ի բաց առնելով Առաքելոց դասուն մէջէն, մէկ քանին՝ որ ամուսնացեալ էին. այսինքն Պետրոս, Փիլիպպոս և այլք, որոնք որ մեր Փրկիչը ընտրեց խորութիւն չընելով, կամ լաւ եւս այս խնդրոյս վրայօք արգելք մը չդնելով, այլ և 'ի բաց առնելով առաջին և երկրորդ դարերուն ընդհանուր եկեղեցւոյ մէջ երեւցած ու մեզի ծանօթ եղած ուչեղածները, այլ միայն մեր Ազգային եկեղեցւոյն մէջ երեւցածներէն կ'սկսիմք, որոնք նշանաւոր էին. Նախապէս այն է մեր հոգեւոր Հայրն և Առաքեալն յԱստուծոյ Գրիգոր Լուսաւորիչը, որ երրորդ դարուն վերջերը երեւցաւ, ու ինքը ամուսնացեալ էր և որդւոց ու զաւակաց տէր. բայց և այնպէս 'ի սկիզբն չորրորդի դարուն յԱստուծմէ կոչեցաւ և ընտրեցաւ 'ի քահանայութիւն տանս Հայոց, որուն Բարեպաշտուհի կինն ալ կենդանի էր. բայց սա կայ որ ինչպէս որ իւր սրբասէր կինը Մարիամ կուսաստան մնաւ, նոյնպէս և ինքը Լուսաւորիչ Հայր մեր հրաժարելով աշխարհէն Սեղուհ լեառը առանձնացաւ։

Երկրորդ. —Սորա որդին Սուրբ Վրթանէս ամուսնացեալ էր և զաւակաց ալ տէր, սակայն Կաթուղիկոս եղաւ Ազգիս Հայոց, ինչպէս որ սորա որդին ալ Սուրբ Գրիգորիոս Կաթուղիկոս եղաւ Ազուանից։

Երրորդ. —Միւս որդին Վրթանէսի և թոռն Լուսաւորչին Սուրբ Յուսիկ ամուսնացեալ էր, և երկու զաւակ ունէր, Պապ և Աթանադինէ, բայց հրաժարելով աշխարհէն՝ ըսել կուզեմք կնոջմէն, քահանայապետութիւն վարեց տանս Հայկայ. բայց պատմութիւնը մեզի չյայտներ թէ արդեօք, ասոնք ալ հրաժարած ժամանակնին իրենց կանայքը կուսաստան մնան, թէ առանձին կեանք վարեցին Լուսաւորչայպէս։

Չորրորդ, — Մեծն Ներսէս Սրբազան հայրապետը, որ Աթանագինէի որդին և Ցուսկան Սրբազան հայրապետին թոռն էր և ամուսնացած, բայց և այնպէս իր կնոջը կենդանութեանը Լուսաւորչայ աթոռը բազմեցուցին ղինքը, որոյ կինը իշխանուհի մը ներ Ցունաց ազգէն Սանդուխտ անունով, բայց պատմութիւնը չը յայտներ թէ՝ հայրապետական կարգը առած ժամանակը իւր կնոջմէն հրաժարած ըլլայ, այլ միայն իր սրբութեանը ու մեծագործութեանը նայելով, մանաւանդ մէկ զաւակ մ՚ալ ունեցած ըլլալուն համար, այսչափ մը կրնայ ենթադրուիլ, որ 'ի հարկէ իր պապերուն ընթացքին հետեւելով հրաժարեցաւ իւր կնոջմէն. նա մանաւանդ իր կենդանութեանը իւր կինը վախճանած և Սուրբ Սահակ որբ մնացած էր։

Հինգերորդ. — Սորա որդին Սուրբ Սահակ Պարթեւ հայրապետնիս ալ աշխարհ մտած էր. բայց աղօտիւ կերեւի թէ իր կնոջմէն հրաժարելէն զկնի Սուրբ օծումը ընկալաւ. քանզի մէյմը որ ղինքը դժուարաւ համոզեցին աշխարհք մտնելու, յորդորելով թէ Լուսաւորչայ շառաւիղը մնայ, քանզի ինքը միայն մնացեր էր Լուսաւորչայ սերունդէն, մէյմ՚ալ որ իրեն արու զաւակ չի տալուն համար Աստուած, շատ տրտմեցաւ ու տրտմութեանը մէջ այն հրաշալի և միանդամայն Աղդիս և անոր քա-

հանայապետութեան վրայ դալիք աղետալի տեսիլքը տեսնալով, միայն իր մէկ հատիկ Սահականուշ դուստրովը մխիթարուեցաւ։ Եւ ահա ասոնք են չորրորդ և հինգերորդ դարերուն մէջ երեւցածներն։ Կամ լաւ եւս նշանաւորներն են, որովհետեւ 'ի հարկէ ասոնց օրինակին հետեւող քահանայք, վարդապետք և եպիսկոպոսունք ալ դտնուեցան, որոնցմէ անուանիները և պատմութեանց մեղի ցուցուցածները նշանակեցինք, ու վերստին կը նշանակենք։

Վեցերորդ. — Անցնելով վեցերորդ, եօթներորդ և ութերորդ դարերուն մէջ յայտնուած ու չ՚յայտնուածները, այլ իններորդ դարուն մէջ նշանաւորն է Զաքարիա իշխանն Կոտայեցի, որ ամուսնացեալ աշխարհական անձ մի էր. բայց իր իմաստութեանը ու վարուց կատարելութեանը համար, ղինքը հրաւիրելով եպիսկոպոսաց և Աղատաց ժողովը, մի և նոյն օրուան մէջ սարկաւագ, քահանայ, եպիսկոպոս և կաթուղիկոս ձեռնադրեցին՝ 854 թուականին, այլ սակայն պատմութիւնը յայտնի չցուցներ, որ կնոջմէն հրաժարեցուցած ըլլայ ժողովը. այլ կը մակաբերեմք թէ՝ իւրաքանչիւր անձին կամացը թողած էին նախնի հարք մեր. այսինքն կամ հրաժարէին և կամ չի հրաժարէին, երկոքինն եւս ընդունելի էր և է եկեղեցւոյն. այլ միայն թէ առաւել եւս օրի-

նաւոր համարուած էր և է հրաժարական տա-
լը. եթէ ինքը կատարեալ և առաքինի և աղ-
դասէր է, ինչպէս որ կարգն ալ այնպէս կը
պահանջէ, որ իսկապէս այցելու հովիւ ըլլայ
հօտին, աշխարհային և ընտանեաց գրաղմուն-
քէն հեռի մնալով և միայն իրեն յանձնուած
հօտը օրինաւորապէս արածելով. ապա թէ ոչ
ունի նա ժուժ՝ ու այն ձիրքերը և կատարելու-
թիւնները, շատ լաւ է, կամ խպառ չըլլայ
հովիւ, և կամ եթէ ըլլալու ըլլայ՝ իր ամուսնէն
չբաժանի, առաքելոյն պատուէրին հետեւելով
թէ՝ եթէ ոչ ունի ժուժ՝ ամուսնացի, կամ ա-
մուսնացեալ է այնպէս մնացէ, և եթէ եպիս-
կոպոս է միոյ կնոջ այր լինել պարտաւոր է. և
ոչ բաղմաց . . . . որ օրինաւորապէս կատարէ
իրեն յանձնուած պաշտօնը՝ գայթակղութիւն
մը չի տալով ժողովրդեանը, քանզի օրինակ է
հօտին և առաջնորդ։

Եօթներորդ. — Յտասներորդ դարուն մէջ
Խոսրով Մեծն Անձեւացեաց գաւառին եպիսկո-
պոսը, որ ամուսնացած էր և երեք հատ զա-
ւակ ունէր, որոնցմէ երեւելին է Սուրբն Գրի-
գոր Նարեկացին, բայց պատմութիւնը ինչպէս
վերոյիշելոցս՝ նմանապէս սորա համար ալ որո-
շակի չի գրեր, թէ արդեօք զկնի հրաժարելոյն
կնոջմէն՝ ընկալաւ աստիճան եպիսկոպոսու-
թեան, կամ ամուսնէն չի հրաժարելով, այլ
այսքան մը յայտնի կերեւի պատմութենէն,

որ ինքը սուրբ և ընտիր անձ մի լինելովը, նաեւ
իր հասակը լեցած ըլլալովը, հրաժարած պի-
տի ըլլայ աշխարհէն, ինչպէս որ մեկ երեւելի
պատմիչ մ՝ալ այնպէս կը գրէ, բայց սա կայ
որ, իր առաջնորդութեան ժամանակը, կինը
ողջ էր կրսուի, և Լուսաւորչայ կնոջը պէս անա-
պատ կամ կուսատան երթալու հարկ մը չէր
դրուած վրան, ու այն օրինակ դրուած մ՝ալ
չկայ, ըստ որում պատմութիւնն ալ ասոր վրա-
յօք որոշակի բան մը չի գրեր, ուստի կեն-
թադրեմք թէ, ինչպէս արանց, նոյնպէս և
կանանց ալ իրենց կամացը և բաղձանացը թող-
ուած էր անապատանալ կամ ոչ, այլ միմիայն
թէ սիրով և միմիանց կամեցողութեանը՝ ուխ-
տին ու ջերմեռանդութեանը վերաբերեալ էր
հարկաւ։

Ութերորդ. — 980 թուականին՝ երանելին
Սիմէոն վանականը, որ ինքը ազատ տոհմէն անձ
մի էր, և այնպէս կը կարծուի թէ ինքը վա-
նական ըլլալ կը ցանկար, բայց իրեն ծնողացը
հրամանէն բռնադատեալ ամուսնացաւ, այ-
սու ամենայնիւ առանց մերձենալու 'ի կինն
իւր, ըստ օրինակի Սրբոյն Ալեքսիանոսի տու-
նէն խոյս տուաւ, և դնաց Կամրջաձորոյ և Սե-
ւանու վանքը կրօնաւոր եղաւ։ Բայց խնդիր է
թէ, ասանկներուն կինը վերստին ամուսնացան
արդեօք. կըսեմք, որքան որ պատմութիւնը
այդ մասին վրայօք բան մ՝ալ չի գրեր նէ.

բայց խնդիրը յայտնի է, թէ այսպիսի իրողութեանց մէջ կոչումի ըսուած մէկ խորհուրդ մը կայ, և այն կոչումն ալ Աստուածային է, և ոչ մարդկային, ուստի այն անձը, որ ընտրելով պիտի կոչէ նէ Աստուած իրեն պաշտօնեայ կացուցանելու համար, հարկաւ համբերութեան շնորհք մ՚ալ կուտայ անոր ամուսնոյն. և երբ այն շնորհքը փախցնելու որ ըլլայ թելադրութեամբ սատանայի, յայնժամ ինքն ալ նոյն շնորհքէն զրկուելով աշխարհին ետեւէն կերթայ, որով կամ կամուսնանայ ուրիշի մը հետ, և կամ այնպէս կը մնայ. որով յայնժամ այրը իր հոգեւոր բաժինը կառնու յաւիտենական իր ուխտը և սուրբ կոչումը կատարելով, և կինն ալ իր աշխարհային բաժինը կառնու վաղանձուկ իր մարմնաւոր բաղձանքը կատարելով. և ասով մեղադրելի չըլլար այրը, իւր կինը թողած ըլլալուն համար. քանզի իւր կինը թողելով մէկ ուրիշի մը հետ չի կապուիր կոր, այլ Աստուծոյ հետ. վասնորոյ կինն ալ համբերել պարտ է. քանզի համարելու է թէ, եթէ մէկ անտանելի և մշտատեւ հիւանդութեան մը հանդպելու ըլլայ այրը, ի՞նչ պիտի ընէր, չէ՞ որ իւր ցաւը առաւել եւս պիտի սաստկանայր, ու համբերութիւնը լրանալով յուսահատութեան մէջ պիտի մնար յայնժամ, վասնորոյ այս բանին չի զայրանալով և զինքը Աստուծոյ կամացը յանձնելով համբերելու

պարտաւոր է, և ըստ որում Աստուծոյ խորհուրդը անքննելի է, վասնորոյ կրնայ ըլլալ որ երբեմն մարդուն ջերմեռանդութեանը և կնոջը անառակութեանը նայելով, Աստուած այնպիսի այրը կորոշէ ու կառնէ իրեն պաշտօնեայ ընտրելով, և երբեմն մահուամբ 'ի կեանս վերափոխելով 'ի յանդիմանութիւն և 'ի զգաստութիւն կնոջը. վասնորոյ ինչպէս ըսինք համբերել պարտ է, և այսպիսի իրողութեանց մէջ գիտնալու է որ՝ Աստուծոյ մատը կայ, քանի որ Աստուծոյ մատը, որ է ըսել Աստուծոյ կամեցողութիւնը կայ նէ այն բանին մէջ, և երբոր ինքն ալ հաւատացեալ և ջերմեռանդ քրիստոնեայ է նէ, փառք տալով Աստուծոյ, որով կամ ինքն ալ՝ եթէ կը հաճի՝ կուսաստան երթալու է, կամ առանձին կեանք վարելու է համբերութեամբ. բայց եթէ այսպիսի իրողութեանց մէջ այր և կին միմեանց հաւանութեամբը և խորհրդոյն եղած ըլլան, շատ փափաքելի է և օրինաւոր։

Ինն երորդ. — Մեսասաներորդ դարուն մէջ երեւցաւ Գրիգոր Վկայասէր բազմարդիւն վարդապետը, որ էր 'ի տոհմէ Պահլաւկաց 'ի զարմէ Սուրբ Լուսաւորչի, որ իր սրբութեանը և անարատ վարուցը համար զինքը կաթուղիկոս կարդեցին, թէեւ ինքը ամուսնացած էր և մեծ պաշտօնի հասած և մինչեւ անգամ Դիւանութեան պատիւ ընկալած էր Ցունաց Կայս-

ըէն, բայց երանելին ունայնութիւն աշխարհի համարելով՝ բոլորէն ալ հրաժարեցաւ, ու առաքինական ու վանական վարուք փառաւորուելով, ինչպէս ըսինք ամենայն Հայոց կաթուղիկոս ալ եղաւ։ Անցնինք յետագայ դարերուն մէջ երեւցածներուն։

Տասներորդ. — Երեքտասան դարուն վերջերը, այսինքն 1285 թուին Եղնկայու Առաջնորդ երեւելին Սարգիս եպիսկոպոս որնոր աշխարհք մտած էր և զաւակ ալ ունէր, և իր կինն ալ ողջ էր, բայց նա հրաժարելով աշխարհէն, Սեպուհ Լեառը Սուրբ Լուսաւորչայ վանքը առանձնացաւ, և ետքը Եղնկայու առաջնորդ կարգուելով չինութեան և բարեկարգութեան մէջ պահեց նոյն վիճակը։ Սորա զաւակացը համար կըսուի թէ՝ որդւոց յորդի մինչեւ ցհինգերորդ դարն յաջորդաբար առաջնորդ կարգեցան Եղնկայու, իրենց պապը Սարգիս եպիսկոպոսը նոյն վիճակը բարեկարգելուն և չինութեան մէջ պահելուն համար, որոնց անունը յականէ կը յիշուին, Ղազար, Մարտիրոս, Թադէոս և այլք։ Անցնինք հետեւեալ դարուն մէջ պատահածներուն։

Մեռասներորդ. — Հնգեռասներորդ դարուն սկիզբը, 1420 թուոյն երեւցաւ Վարդան վարդապետ Դատվանեցին, որ և Բաղիշեցի ալ կը կոչուի, սա եւս ամուսնացեալ էր. բայց հրաժարելով աշխարհէն միայնութեան կեանք

վարեց, և ապա 1421 թուին նահատակեցաւ արիական մահուամբ, 'ի ձեռն Շամխատին ամիրային։ Անցնինք միւսները յետագայ դարուն։

Երկոտասաներորդ. — Եօթնեւտասներորդ դարուն սկիզբը (1610. ամին) Կիրակոս վարդապետ Տրապիզոնցին, այր մեծագործ և բարեկարգիչ վանօրէից, սա երեւելի և հարուստ անձ մի էր և զաւակաց ալ տէր, սակայն հրաժարելով ամուսնէն՝ կրօնաւորութեան կարգը մտաւ, ժամանակին գտնուած դէջութիւններուն և վանօրէից չինութեան դարման և օգնութիւն մ'ընելու դիտաւորութեամբ, որ և իր նպատակին ալ հասաւ. այսինքն՝ աշակցութեամբ Սաղմասավանից առաջնորդին Սարգսի եպիսկոպոսի՝ բազում չինութիւն և բարեկարգութիւն ըրաւ կործանեալ և խանդարեալ Հայաստանու վանօրէից. այլ և իւր ունեցած հարստութեան մէկ մասը՝ աղքատաց, մէկ մասը՝ Տրապիզոնի եկեղեցւոյն, և մէկ մասն ալ վանօրէից բաշխեց, այս առաքինի դիւցազն Անձը և ճշմարիտ Հայրենասէրն ու Կրօնասէրը, արդեօք ո՞ւր են այժմ այսպիսի Հայերը...։

Երեքտասաներորդ. — Նոյն եօթնեւտասաներորդ դարուն մէջ երեւցաւ, Ղուկաս վարդապետ Տաշրացին աղնուական տանէն, որ հրաժարելով աշխարհէն, Ղեւոնդ Անապատը գընաց և անդ կրօնաւորեցաւ բազում չինութիւն

առնելով յիշեալ Անապատին։ Սորա որդին էր Մելիք Եդան հռչակաւոր իշխանը, որ Շուշայ մօտ դտնուած Տող լեառը ձեռք բերելով՝ բոլոր շրջակայ Պարսիկներն ու Թուրքերը կը սասանեցնէր Նատիրշահին ժամանակը։

Զորեքտասաներորդ. — Նոյնպէս և եօթնեւտասաներորդ դարուն վերջերը Մեսրովբ վարդապետ Տողեցին, սա ալ հրաժարելով կնոջմէն, Աւետարանաց գիւղի անապատը առանձնանալով վարդապետ եղաւ, և կարծի թէ սա յիշեալ Մելիք Եդանին որդին էր։

Հնգետասաներորդ. — Տէր Սիմէոն քահանայն, որ վերոյիշեալ Ղուկաս վարդապետին որդին էր, որնոր ութեւտասաներորդ դարուն սկիզբները, այսինքն՝ 1724 թուին եպիսկոպոս ձեռնադրուելով Ղարաբաղու մէջ Կաթուղիկոս վանուց Առաջնորդ կարգուեցաւ, վերոյիշեալ Մելիք Եդանին միջնորդութեամբը, և Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսին հաճութեամբն ու ձեռնադրութեամբը։

Ասոնցմէ 'ի զատ՝ կը թողումք ժամանակ ժամանակ այրի մնացեալ անձինք քահանայ, վարդապետ ու եպիսկոպոս լինելն, որոնց համար հասարակօրէն շուշտակ կըսուի, և դեռ մեր ժամանակին ալ այսօր շատեր կան, որոց անունները մեր խնդրոյն չվերաբերելուն համար հարկ չէ որ նշանակեմք. այժմ հարկ կը համարիմք միւս եկեղեցեաց մէջէն մեղի ծանօթ

եղածներէն մէկ քանին ալ դնել, որ չըլլայ թէ տգէտ ոմանք միայն մեր եկեղեցւոյ վերաբերէն այս ըմբռնումը, այլ համոզուին որ նախնի եկեղեցեաց ընդհանուր ընթացքը այս էր, որք են,

Վեցտասաներորդ. — Մեսրոպանէս եպիսկոպոս Ա. որ երրորդ դարուն վերջերը Հայրապետ էր Բիւզանդիոյ, և ինքը Հռովմի Կայսերաց ցեղէն եկած ու ամուսնացած էր։

Եօթնեւտասաներորդ. — Միւռոն սքանչելագործ Կրետացի Սուրբ հայրապետը, ամուսնացեալ էր, եկաց 'ի վերջն երրորդի դարուն և վախճանեցաւ 'ի մէջ չորրորդի դարուն և էր հարիւրամեայ։

Ութնեւտասաներորդ. — Զորրորդ դարուն մէջ Գրիգոր Աստուածաբանին հայրը ամուսնացած էր. և Նազիանզու գաւառին եպիսկոպոս եղաւ, բայց որոշ չէ պատմութիւնը թէ, արդեօք կնոջը կենդանութեանը եղաւ եպիսկոպոս, և թէ կինը վախճանելէն զկնի։

Իններեւտասաներորդ. — Զորրորդ դարուն վերջերը երեւցաւ Սուրբն Գրիգոր Նիւսացի, որբոյն Բարսղի Կեսարու հայրապետին եղբայրը, որ ամուսնացեալ քահանայ էր, և ետքը եպիսկոպոս կարգեց եկեղեցին Նոյն Նիւսա քաղաքին, իւր խմաստութեանը ու կատարելութեանը համար. ասոր ալ պատմութիւնը մութ է՝ կնոջմէն հրաժարելուն ու չհրաժարելուն և կամ վախճանելոյ մասին։

Քսաներորդ. — Նոյնպէս և չորրորդ դարուն մէջ Երանելին Դանիէլ Ասորին, որ Սուրբ Լուսաւորչի աշակերտն էր, և սորա համար կը կարծուի որ, աշխարհիկ քահանայ էր, և ապա Քոր եպիսկոպոս կարգեցաւ Լուսաւորչէն, և մինչեւ անգամ կաթուղիկոս ալ ընտրեցաւ. յետ նահատակութեան Սուրբ Յուսկան Հայրապետին, ինչպէս որ ետքը Երանելին նահատակեցաւ անօրէն Տիրան արքային ձեռօքը խեղդամահ ըլլալով։

Քսանեւմէկերորդ. — Սուրբն Նեղոս Աբբա աշակերտ Ոսկեբերանի որ մեծաղդի անձ մի էր և Եպարգոս Կ. Պոլսոյ. բայց հրաժարելով ընտանիքէն իր կինը և երկու դուստրը կուսանաց վանքը դրաւ և ինքը իր թէոտուլոս որդին առնելով, առանձնացաւ Սինայ լեառը, և անդ Աբբայ և ուսուցիչ եղաւ կրօնաւորաց և բազում արդեամբք վախճանեցաւ 450 ամի Փերկչին։

Քսաներկուերորդ. — Նմանապէս և Սիմէօն միայնակեաց ամուսնացեալ էր, բայց հրաժարելով կնոջմէն նա ալ առանձնացաւ, եւայլն, եւայլն։

Քսաներեքերորդ. — Ուրբանոս Պապն Հռովմայու՝ որ ամուսնացեալ էր յառաջագոյն, բայց հրաժարելով ամուսնէն հայրապետ եղեւ Հռովմի։

Քսանեւչորրորդ։ — Աղէքսանդր Բ. որ ա-

մուսնացեալ էր և զաւակաց ալ տէր, բայց 'ի վերջոյ հայրապետ եղաւ Հռովմի, եւայլն, եւայլն։

Եւ ահա ասոնց պէս ալ Հռովմայ պապերուն մէջ երրորդ դարէն մինչեւ տիներորդ դար կը գտնուին ամուսնացեալ, և կամ ամուսնացեալ եպիսկոպոսներ նոյն Հռովմայ հայրապետաց գաւազանադրոյն մէջ. զորոնք մի առ մի ապացուցանելը չափազանցութիւն համարելով. Ձեր Մեծապատուութիւնը չձանձրացընելու համար բաւական համարեցինք այսքանս, ուստի կրսեմք թէ ապաքէն մինչեւ ցայսր վայր կարծեմ ըստ բաւականին կարողացանք ապացուցանել. թէ ամուսնացեալ անձինք, թէ իրենց յօժար կամօքը, և թէ ժողովուրդին ընտրութեամբը, և կամ թէ ժամանակին գտնուող առաջնորդին հաճութեամբ՝ կրնան հրաժարիլ յաշխարհէ, և վանական քահանայ, վարդապետ և եպիսկոպոս ձեռնադրուիլ, և մինչեւ անգամ կաթուղիկոս լինել, բովանդակ Աղդին հաճութեամբը, միայն թէ բանը իրենց արժանաւորութեանը և ուխտին վրայ է։

Գրեալ 1866 օգոստոս 19.

Կ. Պոլիս Ի Սամաթիայ.

Թ. ՄԻՀՐԴԱՏԵԱՆ

28318-62
16791
ՀՍՍՌ-Արմ ССР

ՈՒՂԵՐՁ

ՎԱՍԵՄԱՓԱՅԼ ԳՐԻԳՈՐ ԷՖԷՆՏԻ

ՄԱՐԿՈՍԵԱՆ

Աղդասէր Տէր ;

Ներքոյ գրեալ աշխատասիրութիւնիս որ Ձեր խնդրանօքը գրած էինք , նոյնը այժմ հրատարակել արժան դատելով Ձեր անուանը կը նուիրեմք , յուսալով որ ներքոյ գրութիւնիս Ձեր փափաքանաց համաձայն և Աղգիս ողջամիտ մասէն ընդունելի կըլլայ . տպագրութեան հոդ տարի , որպէս զի թէ Ձեր խնդիրքը և թէ մեր աշխատութիւնը անօգուտ ելած չ'ըլլայ . ընդունեցէք Տէր իմ անկեղծ շնորհակալութեանս հաւաստին , որով Մնամ անկեղծ բարեկամ Ձեր :

ԹԱԴԷՈՍ ՄԻՀՐԴԱՏԵԱՆ

Գին 60 փարայ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0108453